ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝

ԵՊԲՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 01 ՈՐՈՇՄԱՄԲ,

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ԹԻՎ 26-06-06-02 ՈՐՈՇՄԱՄԲ

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

I. ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ (ԶԵՂՉ) ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան կամ ԵՊԲՀ) «Ուսման վճարի փոխհատուցման մասին» կանոնակարգով սահմանվում են Համալսարանի կողմից՝ բարձրագույն կրթության ուսանողների, կլինիկական օրդինատորների (ռեզիդենտների) ուսման վճարի չափերի ամբողջական և մասնակի փոխհատուցման կանոնները և պայմանները:

2. Համալսարանը վճարովի ուսուցմամբ սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն հինգ տոկոսի չափով հատկացնում է ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վճարի ամբողջական կամ մասնակի զեղչ՝ նախապես հաստատված և հրապարակված պայմաններով, առաջնահերթությամբ քննարկելով ՀՀ քաղաքացի հանդիսացող սովորողների դիմումները:

Հոդված 2. Իրավական հիմքերի մասին

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը», ՀՀ Կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգը», ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել սույն կանոնակարգով սահմանված փոխահատուցումների բացառություններ:

3. Սույն կանոնակարգը չի տարածվում՝

1) բարձրագույն կրթական համակարգում կցագրված անձանց վրա,

2) երկրորդ մասնագիտություն ստացող կլինիկական օրդինատորների վրա,

3) մասնագիտացող և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներին մասնակցող բուժաշխատողների վրա,

4) ինտերնատուրայում սովորողների վրա,

5) ինտերնատուրայից հետո երկրորդ մասնագիտություն ստացող կլինիկական օրդինատորների վրա, բացառությամբ ՀՀ Պաշտպանության նախարարության պատվերով ուսումնառած ինտերների:

4. ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնակարգով նախատեսված ուսման վճարների ամբողջական կամ մասնակի զեղչի հիմք հանդիսացող փաստաթղթերն ուսումնասիրում է Համալսարանի «Ուսման վճարների փոխհատուցման հարցերի հանձնաժողովը» (այսուհետ՝ Հանձնաժողով), որը լիազորված է ընդունել սովորողի ուսման վճարի ամբողջական կամ մասնակի զեղչի մասին խորհրդատվական որոշումներ և ներկայացնել ռեկտորի հրամանագրմանը:

Հոդված 3. Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություն-ները

Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) ***Ուսման վճար***՝ Համալսարանի որևէ կրթական համակարգում սովորողի համար Համալսարանի իրավական ակտով սահմանված ուսումնառության համար վճար.

2) ***Ուսման վճարի փոխհատուցում (զեղչ)***՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնակարգով սահմանված կարգով և չափերով սովորողներին տրամադրվող ուսման վճարի ամբողջական և մասնակի փոխհատուցումներ՝ զեղչ (այսուհետ նաև՝ զեղչ):

3) ***Միջին որակական գնահատական*** (ՄՈԳ)՝ Համալսարանի «Բարձրագույն կրթության կազմակերպման մասին» կանոնակարգով սահմանված չափանիշերով որոշվող առաջադիմության ցուցանիշ՝ ուսումնառության ընթացքում գնահատականների միջինացված հաշվարկով:

II. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ԶԵՂՉԻ ՉԱՓԵՐԸ

Հոդված 4. Պետության կողմից սահմանված ուսման վճարի զեղչերը

1. Համալսարանի սովորողներին՝ պետության կողմից տրամադրվող ամբողջական կամ մասնակի ուսման վճարի փոխհատուցումների կանոնները սահմանվում են ՀՀ Կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգով»:

2. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջները չեն տարածվում ՀՀ Պաշտպանության նախարարության հետուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ Պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած սովորողների վրա՝ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Հոդված 5. Ուսման վճարի զեղչերն ուսանողների առաջադիմության հիմքով

1. ՀՀ Կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգով» սահմանված կանոններով՝ ՀՀ Կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) կարգով» ընդունված ուսանողներին տրամադրվում է ուսման վճարի ամբողջական փոխհատուցում մեկ ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա փոխատեղման սկզբունքով, պետության միջոցներից:

2. Համալսարանի 1-ին կուրս ընդունված ուսանողի ուսման վճարի ամբողջական կամ մասնակի զեղչ տրամադրվում է ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կանոններին համապատասխան:

3. Երկրորդ և հաջորդող կուրսերում ուսման վճարի ամբողջական զեղչ տրամադրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով: Սույն կետի իմաստով ուսանողն ունի «Բարձր առաջադիմություն» ունեցող ուսանողի կարգավիճակ, եթե ուսման վճարի լրիվ զեղչի նպաստի մրցույթի ժամանակ ունի համապատասխան վարկանիշային (ռեյտինգային) միավորներ և ստուգարքներն ու քննությունները հանձնել է մինչև մարման շրջանը կամ Համալսարանի իրավական ակտերով սահմանված այլ դեպքերում:

4. Ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

5. Վճարովի ուսուցման համակարգում վերականգնված ուսանողը կարող է մասնակցել պետության կողմից ուսանողական նպաստի լրիվ զեղչի համար

անցկացվող փոխատեղման մրցույթին՝ առնվազն մեկ ուսումնական տարի սովորելուց հետո:

6. Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի զեղչ 50 տոկոսի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի զեղչի համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0,1 միավոր տարբերությամբ:

Հոդված 6. Ուսման վճարի զեղչերն ուսանողների սոցիալական կարգավիճակի հիմքով

1. Համալսարանն տրամադրում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի զեղչ՝ վճարովի համակարգում սովորող ուսանողներին, հետևյալ կարգավիճակի դեպքերում՝

1) Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոս, տվյալ ուսումնական տարվա համար, եթե ուսանողը հաղթահարել է միջին որակական գնահատականի (ՄՈԳ) 70 տոկոս շեմը.

2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ 80 տոկոս, մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը, անկախ ՄՈԳ-ից.

3) մինչև 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոս, տվյալ ուսումնական տարվա համար, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

4) Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

5) Երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոս, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

6) Խորը և ծանր ֆունկցիոնալության աստիճանի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս, տվյալ ուսումնական տարվա համար, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

7) Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 20 տոկոս, տվյալ ուսումնական տարվա համար, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը.

8) Չարորակ նորագոյացությամբ հիվանդություններ ունեցող ուսանողներին՝ 100 տոկոս, անկախ ՄՈԳ-ից, ամբողջ ուսումնառության ընթացքում մեկ ուսումնական տարվա համար, անկախ առաջադիմությունից:

2. Առաջին կուրսի ուսանողների՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրամադրվում են առաջին կուրսի երկրորդ կիսամյակից, ինչպես նաև ուսումնառության ընթացքում համապատասխան կարգավիճակը ձեռք բերելու պահից:

3. Սույն հոդվածով սահմանված ուսանողներին ուսման վճարի զեղչը դադարեցվում է՝ ուսումնառության ընթացքում համապատասխան կարգավիճակը կորցնելու պահից:

Հոդված 7. Ուսման վճարի զեղչերը մարտական հերթապահության և մարտական գործողությունների մասնակից ուսանողների համար

1. Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին 40 տոկոս՝ տվյալ ուսումնական տարվա համար, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 50 տոկոս շեմը:

2. 2020 թվականի մարտական գործողություններին մասնակցի, մասնակցի երեխա և ամուսին (ամուսնությունը մարտական գործողություններից առաջ կամ ընթացքում գրանցված) սովորողներին՝ Համալսարանի միջոցների հաշվին տրամադրվում է ուսման վճարի մասնակի փոխհատուցում 20 տոկոսի չափով՝ անկախ ՄՈԳ-ից: Սույն դրույթը չի տարածվում 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից ուսանողների վրա:

Հոդված 8. Ուսման վճարի զեղչերը Համալսարանի աշխատողների երեխա ուսանողների համար

1. Համալսարանի ֆինանսական միջոցներից՝ առկա աշխատողների համար նախատեսվում է խրախուսում՝ աշխատողի մինչև 25 տարեկան երեխա-ուսանողի ուսման վճարի զեղչ, եթե ուսանողը հաղթահարել է ՄՈԳ-ի 70 տոկոս շեմը, հետևյալ կարգով և չափերով՝

1) ԵՊԲՀ-ում 10-ից մինչև 15 տարի աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների երեխաների համար՝ մեկ ուսումնական տարվա զեղչ 30 տոկոսի չափով.

2) ԵՊԲՀ-ում 15-ից մինչև 20 տարի աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների երեխաների համար՝ մեկ ուսումնական տարվա զեղչ 50 տոկոսի չափով.

3) ԵՊԲՀ-ում 20 և ավելի տարիներ աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների երեխաների համար՝ մեկ ուսումնական տարվա զեղչ 80 տոկոսի չափով.

2. Աշխատողների ԵՊԲՀ-ում աշխատանքային ստաժը հաշվարկվում է անկախ ԵՊԲՀ-ում նախկինում ստաժի ընդհատման հանգամանքից:

Հոդված 9. Ուսման վճարի զեղչեր ստանալու մասին ուսանողների դիմումների ներկայացման ժամկետները

1. Ուսանողների ուսման վճարի զեղչ ստանալու մասին դիմումներն ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի մեկնարկին հաջորդող չորս շաբաթների ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված ժամկետների:

2. Համալսարանի 1-ին կուրսի ուսանողները Համալսարանի կողմից զեղչ ստանալու մասին դիմումներ կարող են ներկայացնել երկրորդ կիսամյակում՝ առաջին կիսամյակի ՄՈԳ-ի արդյունքների հիման վրա, եթե սույն կանոնակարգով տվյալ զեղչի հանգամանքի համար ՄՈԳ-ի արդյունքները պարտադիր են:

3. Ուսման վճարի զեղչի մասին 1-ին կիսամյակում դիմումը սահմանված ժամկետում չներկայացրած ուսանողները դիմումներ կարող են ներկայացնել 2-րդ կիսամյակի մեկնարկին՝ միայն 2-րդ կիսամյակի համար, նախորդ ուսումնական տարվա ՄՈԳ-ի արդյունքների հիման վրա, եթե սույն կանոնակարգով տվյալ զեղչի հանգամանքի համար ՄՈԳ-ի արդյունքները պարտադիր են:

4. Ժամկետային զինվորական ծառայությունից հետո վերականգնված ուսանողները ուսման վճարի զեղչի մասին դիմումներ կարող են ներկայացնել ծառայությունից հետո մեկնարկող կիսամյակի մեկնարկին, մինչև ծառայությունը սովորած ուսումնական տարվա ՄՈԳ-ի արդյունքներով, եթե սույն կանոնակարգով տվյալ զեղչի հանգամանքի համար ՄՈԳ-ի արդյունքները պարտադիր են:

5. Առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդից, հղիության ու ծննդաբերության արձակուրդից, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդից հետո վերականգնված ուսանողները դիմումներ կարող են ներկայացնել՝ վերականգնման օրվանը հաջորդող ժամանակահատվածի համար, մինչև սույն կանոնակարգով տվյալ զեղչի հանգամանքի համար նախատեսված ժամկետի ավարտը՝ մինչև արձակուրդի ուսումնական տարվա ՄՈԳ-ի արդյունքներով, եթե սույն կանոնակարգով տվյալ զեղչի հանգամանքի համար ՄՈԳ-ի արդյունքները պարտադիր են:

III. ՀԵՏԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ԶԵՂՉԻ ՉԱՓԵՐԸ

Հոդված 10. Կլինիկական օրդինատորների ուսման վճարի զեղչերը

Համալսարանի ֆինանսական միջոցներից ՀՀ քաղաքացի հանդիսացող կլինիկական օրդինատորներին ուսման վճարի ամբողջական և մասնակի զեղչեր տրամադրվում են՝

1) Առանց ծնողական խնամքի մնացած կլինիկական օրդինատորներին՝ 80 տոկոս, մինչև կլինիկական օրդինատորի կարգավիճակում 26 տարեկանը լրանալը.

2) Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած կլինիկական օրդինատորներին՝ 30 տոկոս, ամբողջ ուսումնառության համար, անկախ առաջադիմությունից.

3) 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի և 2020 թվականի մարտական գործողություններին մասնակից կլինիկական օրդինատորներին՝ 40 տոկոս, ամբողջ ուսումնառության համար, անկախ առաջադիմությունից.

4) 2020 թվականի մարտական գործողությունների մասնակցի զավակ և ամուսին (ամուսնությունը մարտական գործողություններից առաջ կամ ընթացքում գրանցված)

կլինիկական օրդինատորներին՝ 20 տոկոս, ամբողջ ուսումնառության համար, անկախ առաջադիմությունից.

5) Զոհված զինծառայողի մինչև 27 տարեկան զավակ-կլինիկական օրդինատորներին՝ 80 տոկոս, ամբողջ ուսումնառության համար, անկախ առաջադիմությունից.

6) Չարորակ նորագոյացությամբ հիվանդություններ ունեցող ուսանողներին՝ 100 տոկոս, անկախ ՄՈԳ-ից, ամբողջ ուսումնառության ընթացքում մեկ ուսումնական տարվա համար, անկախ առաջադիմությունից:

Հոդված 11. Ուսման վճարի զեղչերը Համալսարանի աշխատողների երեխա կլինիկական օրդինատորների համար

1. Համալսարանի ֆինանսական միջոցներից՝ առկա աշխատողների համար նախատեսվում է խրախուսում՝ աշխատողի մինչև 27 տարեկան երեխա-կլինիկական օրդինատորի ուսման վճարի զեղչ, հետևյալ կարգով և չափերով՝

1) ԵՊԲՀ-ում 10-ից մինչև 15 տարի աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների երեխաների համար՝ մեկ ուսումնական տարվա զեղչ 30 տոկոսի չափով.

2) ԵՊԲՀ-ում 15-ից մինչև 20 տարի աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների երեխաների համար՝ մեկ ուսումնական տարվա զեղչ 50 տոկոսի չափով.

3) ԵՊԲՀ-ում 20 և ավելի տարիներ աշխատանքային ստաժ ունեցող աշխատողների երեխաների համար՝ մեկ ուսումնական տարվա զեղչ 80 տոկոսի չափով:

2. Աշխատողների ԵՊԲՀ-ում աշխատանքային ստաժը հաշվարկվում է անկախ ԵՊԲՀ-ում նախկինում ստաժի ընդհատման հանգամանքից:

Հոդված 12. Ուսման վճարի զեղչ ստանալու մասին կլինիկական օրդինատորների դիմումների ներկայացման ժամկետները

Ուսման վճարի զեղչ ստանալու համար կլինիկական օրդինատորները դիմումները պետք է ներկայացնեն հետևյալ ժամկետներում՝

1) Կլինիկական օրդինատուրայում ընդունելության հրամանի օրվանը հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

2) նախորդող ժամանակահատվածում դիմումը սահմանված ժամկետում չներկայացրած կլինիկական օրդինատորները՝ կարող են ներկայացնել իր համար

նախատեսված հաջորդ ուսումնական կիսամյակի մեկնարկից չորս շաբաթների ընթացքում.

3) Ժամկետային զինվորական ծառայությունից հետո վերականգնման մասին հրամանի օրվանը հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

4) Առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդից հետո վերականգնման մասին հրամանի օրվանը հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

5) Հղիության և ծննդաբերության արձակուրդից հետո վերականգնման մասին հրամանի օրվանը հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

6) Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդից հետո վերականգնման մասին հրամանի օրվանը հաջորդող չորս շաբաթների ընթացքում:

IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հոդված 13. Ուսման վճարի զեղչի այլ կանոններ

1. Սույն կանոնակարգով նախատեսված զեղչի տրամադրման ժամանակ հաշվի է առնվում նաև առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտք ունեցող ուսանողների նախորդ ուսումնական տարում ձևավորված միջին որակական գնահատականը՝ ՄՈԳ-ը:

2. Համալսարանի բարձրագույն կրթական համակարգում կցագրված անձինք, ուսման վճարի զեղչ կարող են ստանալ 1-ին կամ 2-րդ կիսամյակում ուսանողի կարգավիճակ ստանալու դեպքում և ուսանողի կարգավիճակով մեկ կիսամյակ ուսումնառելու և սույն կանոնակարգով նախատեսված ՄՈԳ-ը ձևավորելու դեպքում՝ սույն կանոնակարգով սահմանված ժամկետներում:

3. Ուսման վճարի զեղչի համար հիմք հանդիսացող հանգամանքի փոփոխության դեպքում տրամադրվող զեղչը փոխվում է ուսանողի կամ կլինիկական օրդիանատորի դիմումի հիման վրա կամ Հանձնաժողովի որոշմամբ:

4. Ուսման վճարի զեղչի նոր հանգամանքի առաջացման դեպքում ուսանողի կամ կլինիկական օրդիանատորի դիմումի ներկայացման օրվանից զեղչը տրամադրվում է Հանձնաժողովի որոշմամբ:

5. Համալսարանի բարձրագույն կրթության համակարգում և միաժամանակ կլինիկական օրդինատուրայում սովորելու դեպքում՝ ուսման վճարի զեղչ տրամադրվում է միայն բարձրագույն կրթության համակարգի ուսման վճարի համար:

6. Սույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում ուսման վճարի լրիվ կամ ամբողջական մասնակի զեղչ կարող է տրամադրվել առանձնահատուկ դեպքերում՝ ռեկտորի հրամանով՝ ռեկտորատի կամ Գիտական խորհրդի դրական որոշմամբ՝ հաշվի առնելով սովորողի անձնական կամ ընտանեկան կամ սոցիալական կամ այլ հանգամանքները, ինչպես նաև սովորողի՝ Համալսարանի կարիքների համար ներգրավելու նպատակահարմարությունը: Սույն կետով նախատեսված ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում ստանալու համար ներկայացվում է գրավոր դիմում: Դիմումին կցվում են՝

1) առնվազն երեք երաշխավորագիր՝ տրված սովորողի ուսումնական գործ-ընթացը իրականացնող ստորաբաժանման ղեկավարի (ֆակուլտետի դեկան, կենտրոնի ղեկավար), ինչպես նաև ուսանողական խորհրդարանի նախագահի և պրոռեկտորներից մեկի կողմից.

2) «Բուժհաստատությունների կառավարում» կրթական ծրագրով սովորողների ուսման վճարի լրիվ փոխհատուցում ստանալու դեպքերում՝ առնվազն երեք երաշխավորագիր՝ տրված հանրային առողջության ֆակուլտետի դեկանի, ինչպես նաև Համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի անդամների կողմից.

3) դիմումը հիմնավորող այլ փաստաթղթեր՝ առկայության դեպքում:

7. «Բուժհաստատությունների կառավարում» կրթական ծրագրով սովորողների ուսման վճարի լրիվ փոխհատուցման մասին սույն որոշմամբ սահմանված կարգով հրաման ընդունվելու դեպքում սովորողի հետ կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն կնքվել պայմանագիր, որով սովորողը պարտավորվում է պայմանագրով գնահատված կարիքի հիման վրա Համալսարանն ավարտելուց հետո երեք տարվա ընթացքում, Համալսարանի հրավերով, մասնակցել Համալսարանի զարգացմանն ուղղված փորձագիտական կամ աշխատանքային խմբերի աշխատանքներում՝ պայմանագրով սահմանված կարգով, պայմաններով ու ժամկետով անվարձահատույց հիմունքներով՝ առավելագույնը շաբաթական 2 ժամ տևողությամբ: Սույն կետով սահմանված պայմանագիրը Համալսարանի և սովորողի միջև կնքվում է ուսման վճարի լրիվ փոխհատուցման մասին հրաման ընդունվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված դեպքերում կնքված պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում պարտականությունն իր մեղքով չկատարելու

կամ պայմանագիրը ուսման ընթացքում իր նախաձեռնությամբ լուծելու դեպքում ուսման վճարի լրիվ փոխհատուցում կամ իր նախաձեռնությամբ պայմանագրի լուծման օրվա դրությամբ փոխհատուցում ստացած անձը պարտավոր է Համալսարանին հատուցել ոչ ավելի, քան իր ուսուցումը կազմակերպելու հետ կապված փաստացի ծախսերը՝ սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված պայմանագրով սահմանված կարգով ու պայմաններով:

9. Սույն կանոնակարգով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված տվյալ ուսումնական համակարգի զեղչի մի քանի արտոնություններին Համալսարանի ուսանողի հավակնելու դեպքում՝ ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է առավելագույն զեղչի չափը:

Հոդված 14. Ուսման վճարի զեղչի համար պահանջվող փաստաթղթերի ցանկը

1. Սույն կանոնակարգով նախատեսված զեղչին հավակնելու դեպքում սովորողը ներկայացնում է դիմում ռեկտորի անունով, անձը հաստատող փաստաթուղթ, ֆակուլտետի դեկանատից ՄՈԳ-ի վերաբերյալ տեղեկանք (եթե տվյալ պահանջ առկա է) և յուրաքանչյուր զեղչին համապատասխանող հետևյալ փաստաթղթերը.

1) Ուսումնառության տարիներին առանց ծնողական խնամքի մնացած (երկ-կողմանի ծնողազուրկ) սովորողներ՝

ա. *ծնողների մահվան վկայականների բնօրինակները և պատճենները և (կամ) որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառված լինելու մասին փաստաթուղթ,*

բ. *ուսանողի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը:*

2) Միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներ՝

ա. *ծնողի մահվան վկայականի բնօրինակը և պատճենը կամ դատարանի վճիռը, եթե ծնողը ճանաչվել է անհայտ բացակայող կամ միայնակ մայր լինելու կարգավիճակը հաստատող իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի (Ձև 1) բնօրինակը և պատճենը:*

բ. *ուսանողի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը:*

3) Խորը և ծանր ֆունկցիոնալության աստիճանի հաշմանդամ դարձած ուսանողներ՝ *հաշմանդամության կարգը հաստատող տեղեկանքի բնօրինակը և պատճենը:*

4) Խորը և ծանր ֆունկցիոնալության աստիճան հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներ՝

ա. *ծնող(ներ)ի հաշմանդամության կարգը հաստատող տեղեկանքի բնօրինակը և պատճենը,*

բ. *ուսանողի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը,*

գ. *պետական լիազոր մարմնի կողմից տեղեկանք:*

5) Սոցիալական նպաստառու ընտանիքների ուսանողներ՝

ա. *սոցիալական պետական ծառայության տարածքային բաժնից տեղեկանք, որտեղ նշվում է ընտանիքի նպաստառու լինելու հանգամանքը և անապահովության գնահատման միավորը,*

բ. *տեղեկանք իրավասու կառույցի կողմից, տրված սովորողին՝ ընտանիքի կազմի վերաբերյալ:*

Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի զեղչ ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը յուրաքանչյուր տարի ուսանողը Համալսարանին է ներկայացնում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 30-ը:

6) Սոցիալական աջակցություն ստացող բնակավայրերի ուսանողները պետք է ներկայացնեն՝

ա. *Տեղեկանք իրավասու կառույցի կողմից՝ ընտանիքի կազմի վերաբերյալ,*

բ. *Վերջին 5 տարում տվյալ բնակավայրում փաստացի բնակվելու մասին տեղեկանք:*

7) Երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների սովորողները պետք է ներկայացնեն՝

ա. *Երեխաների ծննդյան վկայականների բնօրինակները և պատճենները,*

բ. *Տեղեկանք իրավասու կառույցի կողմից՝ ընտանիքի կազմի վերաբերյալ,*

գ. *Տեղեկանք սովորելու մասին համապատասխան բուհից:*

8) Մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներ՝ *երեխայի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը:*

9) Պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և մարտական հերթապահություն իրականացրած սովորողներ՝ *ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից օրենքով սահմանված կարգով արձակվող և ծառայության ընթացքում մարտական հերթապահության մեջ ընդգրկված զինծառայողների զինվորական գրքույկների 7-րդ բաժնում հետևյալ գրառմամբ՝ «Իրականացրել է մարտական հերթապահություն», հաստատված զինկոմիսարիատի կամ զորամասի կնիքով:*

10) Մարտական գործողություններին մասնակցած սովորողներ՝ *զինվորական գրքույկների «Նշումներ» մասում գրառում մարտական գործողություններին մասնակցելու վերաբերյալ՝ սահմանված կարգով վավերացված կամ իրավասու պետական մարմնի կողմից տրամադրված համապատասխան տեղեկանք:*

13) ԵՊԲՀ աշխատողների երեխա սովորողներ՝

ա. *Տեղեկանք ԵՊԲՀ-ի Մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունից՝ ծնողի ԵՊԲՀ-ում աշխատող հանդիսանալու և աշխատանքային ստաժի վերաբերյալ,*

բ. *Ուսանողի ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը:*

14) Ձեղչերի հանձնաժողովի գնահատմամբ ծանր համարվող հիվանդություն ունեցող սովորողներ՝ *հիվանդությունը հավաստող փաստաթուղթ, պատշաճ վավերացված բուժհաստատության կնիքով և ղեկավարի ստորագրությամբ:*

2. Բոլոր դիմումների հետ միաժամանակ սովորողը պետք է ներկայացնի անձնագիրը և սոցքարտը կամ նույնականացման քարտը և պատճենը:

Սովորողի ծննդյան վկայականի փոխարեն կարող է ներկայացվել ծնողական հանգամանքը հավաստող այլ փաստաթուղթ և պատճենը:

3. Սույն հոդվածով նշված փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են սովորողին և պատճենների վրա սովորողի կողմից կատարվում է հետևյալ գրառումը. «Բնօրինակի հետ ճիշտ է»:

* * *